ԹԵՄԱ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋ Է ԱՆՑՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱՁՔՈՒՄ

§14. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

1 Քաղաքներում և գյուղերում մարդկանց տները և կահավորումը միանման չէին: Տների տեսքն ու չափերը կախված էին տիրոջ հարստության չափից: Միջնադարում գյուղերում և քաղաքներում տների մեծ մասը փայտաշեն և կավաշեն, փոքր պատուհաններով, հարմարություններից զուրկ մեծ կամ փոքր շինություններ էին: Քաղաքներում հաճախ էին հրդեհներ բռնկվում. օրինակ՝ 1666 թ. հրդեհի հետևանքով Լոնդոնի գրեթե երեք քառորդը վերածվեց մոխրակույտի:

2 Ամերիկայից բերված կարտոֆիլի նկատմամբ երկար ժամանակ անվստահություն կար: Այն ցանում էին տանը՝ թաղարներում, որպես դեկորատիվ բույս: Սակայն սննդի պակասը մարդկանց ստիպեց կարտոֆիլ ցանել դաշտերում: Եթե նույն հողային տարածքից ստացված ցորենը կերակրում էր մեկ մարդու, ապա կարտոֆիլը կերակրում էր երկու մարդու:

Միս հիմնականում օգտագործում էին հարուստ մարդիկ: Օրինակ՝ Ֆրանսիայում XVIII դարում մեկ մարդը տարեկան օգտագործում էր 22 կիլոգրամ միս, մայրաքաղաք Փարիզում՝ 72 կիլոգրամ: Ընդհանրապես Եվրոպայում միս ուտում էին շաբաթը հազիվ մեկ անգամ: